# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ

## ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

«09» ՓԵՏՐՎԱՐԻ 2018թ.

### ԱՎԱԳԱՆՈՒ N 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2018 թվականի թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից՝

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2018Թ .ՓԵՏՐՎԱՐԻ 09 -Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ

ՆԻՍՏԻ

# ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՅԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝* *Գառնիկ Ծատուրյան*

2. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝* *Գառնիկ Ծատուրյան*

3.ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝* *Գառնիկ Ծատուրյան*

4. . ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝* *Գառնիկ Ծատուրյան*

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Բեգլարյան Ջիվան | | | |
| 2.Ղարիբյան Ղուկաս | | | |
| 3. Գրիգորյան Գագիկ | | | |
| 4. Ալոյան Ալի | | | |
| 5.Շահնազարյան Հակոբ | | | |
| 6. Սիմոնյան Սարգիս | | | |
| 7.Արմենակյան Շավարշ | | | |
| 8. Ստեփանյան Վարդուհի | | | |
| 9. Բաղդասարյան Կարինե | | | |

Համայնքի ղեկավար Գ. Ծատուրյան

«09» փետրվարի 2018թ.

գ.Արևիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«09 » Փետրվարի 2018թ. թիվ 2 -Ն

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 69-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով .

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*ՀԱՎԵԼՎԱԾ*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿԻ*
*ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ*
*2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի*
*N 2 -Ն ՈՐՈՇՄԱՆ*

## *ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ*

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

### ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

ԱՐԵՎԻԿԻ գյուղական համայնքի 2017.թ վարչական բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝

Հարկային եկամուտների գծով նախատեսված 12620.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 13165.4 հազար դրամ կամ կատարվել է 104 . 3 % - ով, այդ թվում.

1. Հողի հարկի պլանով նախատեսված 5000.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 4511.0 հազար դրամ կամ կատարվել է 90.2% - ով:
2. Գույքահարկի պլանով նախատեսված 7620.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 8654.5 հազար դրամ կամ կատարվել է 113.6% -ով:

2. ՏՈՒՐՔԵՐ

Տուրքերի գծով նախատեսված 484.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 163.6 հազար դրամ կամ կատարվել է 33.8% - ով, այդ թվում.

1. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքերի գծով նախատեսված 484.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքեhn կազմել է 163.6 հազար դրամ կամ կատարվել է 33.8% -ով:

3. ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ

Ոչ հարկային եկամուտների գծով նախատեսված 2837.3 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1916.9 հազար դրամ կամ կատարվել է 67.5 % - ով, այդ թվում՝

1. Գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գծով նախատեսված 100.6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 62.5 հազար դրամ կամ կատարվել

է 62.1% - ով:

2. հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարների գծով նախատեսված 1636.7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմվել է 817.5 հազար դրամ կամ կատարվել է 49.9%-ով:

3. տեղական վճարների գծով նախատեսված 800.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքեռ կազմել է 865.1 հազար դրամ կամ կատարվել է 108.1% -ով:

4. օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների գծով (ուսման վարձ, ծնող վճար և այլն) նախատեսված 300.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 172.2 հազար դրամ կամ կատարվել է 57.4%-ով:

## 4. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհների գծով (պետական բյուջեից ստացվող դոտացիա, սուբվենցիա, այլ դրամաշնորհ) նախատեսված 48206.9 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 48206.9 հազար դրամ կամ կատարվել է 100.0% - ով:

ԱՐԵՎԻԿԻ գյուղական համայնքի 2017թ. վարչական բյուջեով նախատեսված 66015.4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 65320.5 հազար դրամ կամ կատարվել է 98.9 % - ով, որից սեփական եկամուտները նախատեսված 15941.3 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 15246.3 հազար դրամ կամ կատարվել են 95.6 % - ով:

## ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

ԱՐԵՎԻԿԻ գյուղական համայնքի 2017 թ. ֆոնդային բյուջեի մուտք պլանով չի նախատեսվել, սակայն համայնքի սեփականություն հանդիսացող հողի օտարումից ստացվել է 188.8 հազար դրամ մուտք:

## ԾԱԽՍԵՐ

## *ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ*

1. ԱՐԵՎԻԿԻ գյուղական համայնքի 2017թ. բյուջեի 01 բաժին 0 խումբ 0 դասով ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների գծով նախատեսված 27955.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել 24655.4 հազար դրամ կամ կատարվել է 88.1 %-ով:

ա) տեղական ինքնակառավարում՝ 01 բաժին 1 խումբ 1 դասով նախատեսված 23560.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 21680.8 հազար դրամ կամ կատարվել է 92.0% -ով:

բ) ընդհանուր բնույթի այլ ծառայություն 01 բաժին 3 խումբ 1 դաս նախատեսված 250.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 193.2 հազար դրամ կամ կատարվել է 77.2 % -ով:

գ) ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 01 բաժին 6 խումբ 1 դասով նախատեսված 4145.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 2781.4 հազար դրամ կամ կատարվել է 67.1% - ով:

2. Տնտեսական հարաբերություններ ծախսերի գործառնական դասակարգման 04 բաժին 0 խումբ 0 դասով նախատեսված 1798.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1613.0 հազար դրամ կամ կատարվել է 89.7%-ով:

3. Շրջակա միջավայրի պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 05բաժնի 0 խումբ 0 դասով նախատեսված 880.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 880.0 հազար դրամ կամ կատարվել է 100.0%-ով:

4. բնակարանային շինություն և կոմունալ ծառայություն 6 բաժին 0 խումբ 0 դասով նախատեսված 7900.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 7649.4 հազար դրամ կամ կատարվել է 96.8%-ով:

5. Հանգիստ , մշակույթ և կրոն ծախսերի գործառնական դասակարգման 08 բաժին 0 խումբ 0 դասով նախատեսված 3840.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 3522.3 հազար դրամ կամ կատարվել է 91.7%-ով:

6. Կրթություն ծախսերի գործառնական դասակարգման 09 բաժին 0 խումբ 0 դասով նախատեսված 6867.2 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 6867.2 հազար դրամ կամ կատարվել է 100.0%-ով:

7. Սոցիալական պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժին 0 խումբ 0 դասով նախատեսված 2080.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 2080.0 հազար դրամ կամ կատարվել է 100.0%-ով:

2017թ. բյուջեի վարչական բյուջեով նախատեսված 66015.4 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 61295.5 հազար դրամ կամ կատարվել է 92.8 %-ով:

## ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

2017թ ֆոնդային բյուջեով նախատեսված 18080.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 17498.0 հազար դրամ կամ կատարվել է 96.8% -ով, այդ թվում՝

1. տեղական ինքնակառավարում՝ 01 բաժին 1 խումբ 1 դասով նախատեսված 4300.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 3920.0 հազար դրամ կամ կատարվել է 91.2 % -ով:
2. Տնտեսական հարաբերություններ ծախսերի գոյածառնական դասակարգման 04 բաժին 0 խումբ 0 դասով նախատեսված 10500.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 10490.0 հազար դրամ կամ կատարվել է 99.9%-ով:
3. բնակարանային շինություն և կոմունալ ծառայություն 6 բաժին 0 խումբ 0 դասով նախատեսված 2380.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 2380.0 հազար դրամ կամ կատարվել է 100.0%-ով:

4.Հանգիստ , մշակույթ և կրոն ծախսերի գործառնսւկան դասակարգման 08 բաժին 0 խումբ 0 դասով նախատեսված 900.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 896.8 հազար դրամ կամ կատարվել է 99.6%-ով:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Բեգլարյան Ջիվան | | | |
| 2. Ղարիբյան Ղուկաս | | | |
| 3. Գրիգորյան Գագիկ | | | |
| 4. Ալոյան Ալի | | | |
| 5. Շահնազարյան Հակոբ | | | |
| 6. Սիմոնյան Սարգիս | | | |
| 7. Արմենակյան Շավարշ | | | |
| 8. Ստեփանյան Վարդուհի | | | |
| 9. Բաղդասարյան Կարինե | | | |

Համայնքի ղեկավար Գ. Ծատուրյան

«09» փետրվարի 2018թ.
գ.Արևիկ

# ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2018 թվականի փետրվարի 9 -ի << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին>> N 2 -Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՌՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ

2018 թվականի փետրվարի «09»
գ. Արևիկ

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ԹԻՎ N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի գյուղական համայնքի 2018 թվականի փետրվարի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի գյուղական համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին>> N 2-Ն որոշման ընդունումը պայմանվորված է << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և 69-րդ հոդվածի պահանջներով, և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում համայնքի բուջեի մուտքերն ու ելքերը, որոնք ուղղված են համայնքի զարգացմանը նպաստելուն:

ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՌՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ

2018 թվականի փետրվարի «09»
գ. Արևիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
**ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

«09» Փետրվարի 2018թ. թիվ 3 -Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով , երրորդ մասով, 56-րդ հոդվածի երկրորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի գյուղական համայնքի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի N 2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

## Բյուջեի եկամտային մասում

1) Վարչական բյուջեի եկամտային մասում 1112 տողը ( հողի հարկ համայնքի վարչական տարածքներում գտնվող հողի համար) ավելացնել 1750.0 հազար դրամով և հաստատել 7050.0 հազար դրամ:

2) Վարչական բյուջեի եկամտային մասում 1121 տողը (գույքահարկ փոխադրամիջոցների համար) ավելացնել 1010.0 հազար դրամով և հաստատել 8510.0 հազար դրամ:

3) Վարչական բյուջեի եկամտային մասում 1351 տողը (տեղական վճարներ ) ավելացնել 900.0 հազար դրամով և հաստատել 1630.0 հազար դրամ:

4) Վարչական բյուջեի ծախսային մասում պահուստային ֆոնդը՝ 11 բաժնի 01 խումբ 2 դասի 4891 հոդվածը ավելացնել 3660.0 հազար դրամով, հաստատելով 4891 հոդվածը 15821.7 հազար դրամ:

5) Հաստատել վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ ընդամենը 4025.0 հազար դրամ, ֆոնդային բյուջեի ազատ մնացորդը՝ 127.0 հազար դրամ, ընդամենը 4152.0 հազար դրամ, և ամբողջությամբ ուղղել ֆոնդային բյուջեի 04 բաժնի 03 խումբ 2 դասի 5113 հոդվածին՝ (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) ։

6) ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից ՀՀ Արմավիրի մարզի Արևիկի գյուղական համայնքի երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ին տրվել է 1633.6 հազար դրամ սուբվենցիա, բյուջեի եկամտային մասում 1257 (պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ) տողը հաստատել 1633.6 հազար դրամ: Համապատասխանաբար վարչական բյուջեի ծախսային մասում 09 բաժնի 05 խումբ 1 դասի 4637 հոդվածը ավելացնել 1633.6 հազար դրամով, հաստատելով 4637 հոդվածը 1633.6 հազար դրամ:

8) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարել 9648.0 հազար դրամ հատկացում , որից

-08 բաժնի 02 խումբ 3 դասի 5113 հոդվածին ավելացնել 900.0 հազար դրամ՝ հաստատելով 5113 հոդվածը 900.0 հազար դրամ,

- 06 բաժնի 03 խումբ 1 դասի 5113 հոդվածին ավելացնել 2000.0 հազար դրամ՝ հաստատելով 5113 հոդվածը 2000.0 հազար դրամ ,

- 04 բաժնի 03 խումբ 2 դասի 5134 հոդվածին ավելացնել 900.0 ՝ հաստատելով 5134 հոդվածը 900.0 հազար դրամ,

-04 բաժնի 03 խումբ 2 դասի 5113 հոդվածին ավելացնել 5848.0 ՝ հաստատելով 5113 հոդվածը 10 000.0 հազար դրամ:

## Բյուջեի ծախսային մասում

5) 04 բաժնի 03 խումբ 2 դասի 4241 հոդվածը պակասեցնել 200.0 հազար դրամով:

6) 01 բաժնի 06 խումբ 1 դասի 4241 հոդվածը ավելացնել 200.0 հազար դրամով:

6) 11 բաժնի 01 խումբ 2 դասի 4891 հոդվածը պակասեցնել 2500.0 հազար դրամով՝ հաստատելով 4891 հոդվածը վարչական մասում 3673.7 հազար դրամ , 01 բաժնի 06 խումբ 1 դասի 4841 հոդվածը ավելացնել 2500.0 հազար դրամով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Բեգլարյան Ջիվան | -------------- | -------------- | -------------- |
| 2.Ղարիբյան Ղուկաս | -------------- | -------------- | -------------- |
| 3. Գրիգորյան Գագիկ | -------------- | -------------- | -------------- |
| 4. Ալոյան Ալի | -------------- | -------------- | -------------- |
| 5.Շահնազարյան Հակոբ | -------------- | -------------- | -------------- |
| 6. Սիմոնյան Սարգիս | -------------- | -------------- | -------------- |
| 7.Արմենակյան Շավարշ | -------------- | -------------- | -------------- |
| 8. Ստեփանյան Վարդուհի | -------------- | -------------- | -------------- |
| 9. Բաղդասարյան Կարինե | -------------- | -------------- | -------------- |

Համայնքի ղեկավար Գ. Ծատուրյան

«09» փետրվարի 2018թ.
գ.Արևիկ

# ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2018 թվականի փետրվարի 9 -ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2017թվականի դեկտեմբերի 19 -ի N2-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին >> N 3 -Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՌՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ

2018 թվականի փետրվարի «09»
գ. Արևիկ

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ԹԻՎ N3-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2018 թվականի փետրվարի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի N 2 -Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին >> N 3 -Ն որոշման ընդունումը պայմանվորված է << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի պահանջի կատարմամբ. համայնքի տվյալ տարվա բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը , որը նախորդ տարվա բյուջեի կատարման ընթացքում եկամուտների գերազանցումն է ծախսերի նկատմամբ, անհրաժեշտ է բաշխել որոշման մեջ նշված ուղղություններով:

ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՌՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ

2018 թվականի փետրվարի «09»
գ. Արևիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

«09» Փետրվարի 2018Թ. — Թիվ 4

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 19.01.2018թ. թիվ 10 դրական եզրակացությունը

Արևիկ համայնքի ավագանին որոշում է ՝

Արևիկ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում համայնքի սեփականություն հանդիսացող ջրային նշանակության 2,401 հա (կադաստրային ծածկագիր՝04-027-119-0119) հողամասը փոխադրել գյուղատնտեսական՝ այլ հողեր գործառնական նշանակության:

1.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

| *Ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| 1. Բեգլարյան Զիվան | ------------- | ------------- | ------------- |
| 2.Ղարիբյան Ղուկաս | ------------- | ------------- | ------------- |
| 3. Գրիգորյան Գագիկ | ------------- | ------------- | ------------- |
| 4. Ալոյան Ալի | ------------- | ------------- | ------------- |
| 5.Շահնազարյան Հակոբ | ------------- | ------------- | ------------- |
| 6. Սիմոնյան Սարգիս | ------------- | ------------- | ------------- |
| 7.Արմենակյան Շավարշ | ------------- | ------------- | ------------- |
| 8. Ստեփանյան Վարդուհի | ------------- | ------------- | ------------- |
| 9. Բաղդասարյան Կարինե | ------------- | ------------- | ------------- |

Համայնքի ղեկավար Գ. Ծատուրյան

«09» փետրվարի 2018թ.
գ.Արևիկ

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N10

ք. Երևան 19.01.2018թ.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ մշակույթի 03/14.2/7669-17, ՀՀ բնապահպանության 3/02.2/30709-17, ՀՀ գյուղատնտեսության ԱշՀ/ԱԲ-1/11513-17, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների 07/25.2/7460-17, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների 05/16.3/12459-17, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 02/14.1/683-18 նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 06/11.2/7807-17, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ՆԳ/7800-17 և ՀՀ ԷԵ և ԲՊ նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի 01/07/3863-17 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ** համայնքի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Արևիկ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում համայնքի սեփականություն հանդիսացող ջրային նշանակության **2.401 հա** (կադաստրային ծածկագիր՝ **119-019**) հողամասը փոխադրել գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝ _Վ. Տերտերյան

քարտուղար՝ _Ռ. Մինասյան

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 10/1

ք. Երևան 07.02.2018 թ.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների դրական եզրակացությունները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն. **ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ** համայնքի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ, հանձնաժողովի 19.01.2018թ. թիվ 10 դրական եզրակացացության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ «կադաստրային ծածկագիր 04-027-119-019» բառերը փոխարինել «կադաստրային ծածկագիր 04-027-119-0119» բառերով:

Հանձնաժողովի նախագահ՝ _Վ. Տերտերյան

քարտուղար՝ _Ռ. Մինասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՎԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

«09» փետրվարի 2018թ. թիվ 5

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,նաև հաշվի առնելով Արևիկ համայնքի գույքահարկի գիջման և սոցիալական օգնության տրամադրման համար ստեղծված հանձնաժողովի 2018 թվականի N2 եզրակացությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՍՏԱՏՎԱԾ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2018Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 09-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ

ՆԻՍՏԻ ԹԻՎ 5 ՈՐՈՇՄԱՆ

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

ՑՈՒՑԱԿ

| N | Անուն Ազգանուն | Անձնագիր | ՀՀ դրամ | Ստորագրություն |
|---|---|---|---|---|
| 1. | ՆԱՐԻՆԵ ՄԱՐՅԱՆՅԱՆ | AM0496328 | 50,000 | |
| 2. | ԸՆԴԱՄԵՆԸ | | 50,000 | |

| *Ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| 1. Բեգլարյան Ջիվան | ------------ | ------------ | ------------ |
| 2.Ղարիբյան Ղուկաս | ------------ | ------------ | ------------ |
| 3. Գրիգորյան Գագիկ | ------------ | ------------ | ------------ |
| 4. Ալոյան Ալի | ------------ | ------------ | ------------ |
| 5.Շահնազարյան Հակոբ | ------------ | ------------ | ------------ |
| 6. Սիմոնյան Սարգիս | ------------ | ------------ | ------------ |
| 7.Արմենակյան Շավարշ | ------------ | ------------ | ------------ |
| 8. Ստեփանյան Վարդուհի | ------------ | ------------ | ------------ |
| 9. Բաղդասարյան Կարինե | ------------ | ------------ | ------------ |

Համայնքի ղեկավար Գ. Ծատուրյան

«09» փետրվարի 2018թ.

գ.Արևիկ